մարմին Աւետարանչին Մարկոսի 'ի ներքոյ սեան միոյ, և սկսեալ շինեաց զեկեղեցին, և անդ եդ զմարմինն 'ի Վենետիկ։ Ի սորին իշխանութեանն գնացին Ռիզանքն Հենվեդքն և Վենեցիանքն և թափեցին զսուրբ աշխարհն 'ի ձեռաց բարբարոսաց, նաև զԿեսարիա Պալատինոյ. և իբրև առին զԿեսարիա, երիս բաժինս արարին, Վենեցեանքն առին զփարթամութիւն և և զենչս քաղաքին, Ռիզանքն առին զքաղաքն և զՊարոնութիւն քաղաքին, Հենվեդքն առին զմի թաս կանանչ զմրուխտ միափերթի՝ զոր գտին 'ի նոյն քաղաքն, որ ոչ գտին նման նմին 'ի մէջ աշխարհի, և տարան յաշխարհն իւրեանց։

Հռիդուս Ջորրոռդ՝ որդի Հռիդուսի՝ ըսկսաւ յամի Տեառն ՌՀԸ. ինքնակալեալ ամն ԺԵ։ Սա 'ի կենդանութեան հօր իւրում էառ զԿայսերութիւն, և կալեալ զհայրն իւր՝ եդ 'ի բանտի՝ մինչև մեռաւ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան